

ԲԱԺԱՆՈՒՔԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխար/տ	համար
արեկա՞ր	13 գր.
վեցաւսայ	7
Արսասահմանի	
համար սորեկակ	15 գր.
վեցաւսեայ	8
Աւերիկայի	համար
սարեկակ	3 ճ.
վեցաւսեայ	1.50

Իրանացի սոյր մասին երեսին համար 40 սանթիկ իսկ վերջին երեսին համար 20 սանթիկ է, երեսին աւելի սեղաններու համար 20 0/0 զեղջ կըլլայ:

Վառիայի համար ձեռքի 10 սանթիկ է

ՉԱՐՔՆԱԲԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Դասակ եւ դրամ որ կեղ խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պոչխար/տի համար ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ տրուիր

ՇԱՐՔՆԱԲԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՅՎ ԿՃԱՐԷ

Ս. ԳՍՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒՂԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՆԻՍՏԱՆԻ ԱՍՏՅԱԿ ԳԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՆ ԱՆՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան իրեն գրիմել 2ար-Պօրիս փողոց Վառնա

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ուրախալի երեսոյթ մըն է որուն հանդիսատես կըլլանք այս միջոցիս: Կրթական հարցը, որ ուսուցիչներու համագումարին կոչովը, և այս սիւնակներուն մէջ իսկ, «Ուրուական» յօդուածովը կրկին հրապարակ եկաւ, եռանդազիտօրէն զբաղեցուց պուլկարահայտի թիւը, և այս վայրկեանիս կրթական գործին բոլոր մշակները, ուսուցիչ, հրապարակագիր և հոգաբարձու տենդոտ շարժումի մը մէջ են կըրթական գործին գէպի լու բան մը ընելու համար: Այս տաղնապը բացատրելի է մանաւանդ անո՞ր, վերջերս, պուլկարահայ վարժարաններու սպառնացող վտանգը աւելի շոջափելի դարձաւ: Պաշտօնական կամ կիսապաշտօնական պուլկար անձնաւորութիւններ մերկապարանոց գրին մեր առջեւ օտար վարժարաններու մասին իրենց երկրին վճռական օրէնքը, գտնուեցան կրթական տեսուչներ, որոնք հոգաբարձուներու երեսին պօռացին թէ, այս ընթացքով, շատ հեռու չէ օրը՝ երբ մեզի պիտի ըսեն. «Դուք անկարող էք երկրին պահանջած պուլկար քաղաքացիները պատրաստելու, քաջ ուեցէ՛ք, մենք կրնանք կառավարել զանոնք»:

Այ տատանումի ատեն չէ որ բնաւ վճռականօրէն պէտք է յեղաշրջման ճամբան ձեռք առնել: Այս յեղաշրջման ամենէն պատշաճ գործաւորները քնակաւարար իրենք՝ ուսուցիչներն են:

Դժբախտաբար, ուսուցչական դասակարգը խիստ խայտարակտ ամբողջութիւն մը կը ներկայացնէ այսօր, որ հաւաքուած են այնքան աններդաշնակ ատարներ՝ որոնք բնաւ չի պիտի կրնան իրար հասկնալ, իրարու ձեռք տալ, գծել միակ ճամբայ մը ու անկէ բնթանալ: Երկրորդ՝ կուգան հոգաբարձուները՝ որոնք կամ բոլորովին թոյլ ու ապիկար մարդիկ կըլլան առհասարակ, կամ ինքնահաւան տգէտներ՝ որոնք աղայական բռնապետութեամբ հին բարի օրերու մէջ իրենց անսած ու յաճախած տէր-թոյլիկեան վարժարաններու վերստեղծումը կը պահանջեն մեր ուսուցիչներէն, իսկ, եթէ գտնուին մէկ երկու բանիմաց ու իրենց ւտանձնած պաշտօնին՝ արժանի հոգաբարձուներ, անոնց ձայնն ալ կը խեղդուի մեծամասնութեան մէջ:

Եթէ սակայն հոգաբարձուները այդ յեղաշրջումը իրագործելու կարողութիւնը չեն զգար իրենց մէջ, թոյլ տալու են որ կարող մարդիկ գլուխ հանեն զայն, Ատոր կարճ միջոցն է որ, իւրաքանչիւր հոգաբարձութիւն իր վարժարանին համար հրաւիրէ մանկավարժ տեսուչ մը, իր արւեստին մասնագէտը, որ ուսուցչական խումբը կազմէ, ծրագիրը գծէ, և յանձն առնէ աշակերտներէն վերջը, ուսուցիչներուն կամ ուսուցչուհիներուն ալ դաս տալ, այսինքն սորվեցնել անոնց մանուկը կրթելու և պարզացնելու արուեստը: Որովհետեւ, թէեւ մենք շատ լաւ ուսում ստացած, հմուտ, հին կամ արդի գրականութեանը ու գիտութեան ծանօթ շատ կարող ուսուցիչներ կամ ուսուցչուհիներ ունինք, բայց անոնցմէ շատերուն կը պակսի բուն էականը՝ այն է մանկավարժութիւնը: Որովհետեւ մանուկը դաստիարակելու և զարգացնելու արուեստը հմտութեան հետ առնչութիւն չունի, հոս է՛ն կարեւոր դեր կատարող մանկա-

վարժութիւնն է: Ունի՞ք պէտք եղած թուով ուսուցիչներ կամ ուսուցչուհիներ որոնք մանկավարժներ եղած ըլլան: Չունինք: Ասիկա ճշմարտութիւն մըն է, եւ ցաւալի կէտը այն է որ, մեր ուսուցիչներ չեն ալ հետեւին, գոնէ ինքնաշխատութեամբ այդ պակասը ամբողջացնելու: Ես վստահ եմ որ, մեր ներկայ ուսուցիչներէն շատերը, երբ աշակերտի իրենց հրաւիրած մանկագէտ մանկավարժ տնօրէնէն դաս առնելի մերթըմբ մերթ, պիտի մերժեն՝ իրենց հմուտ մարդու անձնասիրութեանը չը ձգելով այդ նուաստութիւնը:

Պակասը ճանչնալու զայն լըրացնելու աշխատիլը ամենէն թանկագին առաքիչութիւնն է: Ատոր համար երկաթէ կամքի ուժ պէտք է, յարատեւութիւն և աշխատանք: Հաստատու անհոգորդ կամքի տէր ուսուցչին, ուսուցչուհիին կամ հոգաբարձուին համար, նշանակութիւն ունենալու չեն հոս ու հոն շրջող աշակերտները, երբ ան գիտակից իր գործին, անկեղծօրէն համոզուած իր ընթացած ուղիին օգտակարութեան, հեռու ու է կիրքէ, կը ջանայ գործադրել իր գծած ծրագիրը: Ան պէտք է մինչեւ վախճանը շարունակէ, ինչ որ սկսած է և ինչ որ լաւ կը տեսնէ ինք: Դիտողութիւններէ ազդուիլ ու գործը լքանիլը պարզապէս կամքի թուլութեան ապացոյց է: Հրապարակագիր մը, երբ խնդիր մը կը ներկայանայ, պարտաւոր է զայն լաւ մը ծեծել, վերլուծել իր ամէն ձեւերով ու երանգներով, իսկ խնդրոյ ենթականերուն կիցնայ այդ ընդարձակ կարծիքներու մէջէն առնել այն, որ օգտակար է ու զարմադրել զայն առանց ազդուելու կամ վիրաւորուելու մնացածէն, որ կրնայ իրենց մտածումէն տարբեր ըլլար: Ու քանի որ այս միջոցիս, եռանդը արժարժուած է բոլոր կրթական մշակներուն քով, օգտուելու է հանգամանքէն և պուլկարահայ վարժարա-

նաց բարեկարգութեան գործը ի գլուխ հանելու է այս անգամ. ՇԱՐՋՈՒՄ

ՆԱԽԱԿ ԼՕՆՏՈՆԷՆ
ՌՈՒՍ ԱԶՍԱԿԱՆՆԵՐԸ
ԵՒ
Տ Ո Ւ Մ Ա Ն
20 Ապրիլ

Այս վերնագրով պր. Վ. Դ. Սգէտ գրած է կարճ յօդուած մը Լօնտօնի «Մօրնինկ Լիտեր» ազատական օրաթերթին մէջ: Սգէտ անձնօթ մը չէ ուսուցչական շարժման: Անցեալ տարուան իր Թուսաստան այցելութիւնը՝ մօտէն տեղեակ ըրին զինքը հոն կատարուող առամներուն, Հոն ապրեցաւ ու խօսեցաւ ան, Բեթերովէն ու Նիքօլա ցարէն միջեւ այլ եւ այլ կարգի ազնուականներու եւ հասարակ մտերիներու հետ, Չէսսափօնէրը իր բարեկամն ու թշնամիները եղան, որովհետեւ, ինչպէս իր ժամանակին հողորդուող պատեհութիւնը ունեցած եմ, ան մտած էր մէջերին՝ որպէս աւետարան Թուսաստանի վերածնութեան գործին, Ծանօթ է Շարժումի ընթացողներուն նոյնպէս իր բանաստեղծութիւնը: Հիմա որ Տուսայի ընտրութիւնները սկսած են, նոյն խօսողը Սգէտն է, վաղեմի միշտ լաւատես Սգէտը, թէպէտեւ, այդ շափազանց լաւատեսութիւնը զուրկ ըլլայ հիմնական հողէ: Բայց ընդունելով հանդերձ շարք մը սխալները իր արտայայտութեանց, որովհետեւ «Թեղեկաֆֆ» արժանահաւատ թղթակիցը այնքան ալ փայլուն չը ցուցներ ընտրական պատկերները, աւելորդէնք սեպեր տալ այստեղ վէթերան հրապարակագիրին կարծիքները իր ամբողջութեամբ, քանի որ երկար ու յօգնեցնող հատուած մըն ալ չէ:

«Երբ Թուսաստան էի անցեալ տարի, մտաւորապէս երեք ամիս վատնեցի համոզելու ուսուցչականները թէ՛ որքան անկատար ըլլային Տուսան ընտրելու եղանակները, իրենք միմիայն պէտք է օգուտ քաղէին հող ձեռք ձգելու համար, որով յետոյ կրնային իրենց պահանջած ազատութիւններուն տիրանալ: Հնչեցին զիս, արտաքսեցին եւ յայտարարեցին զիս որպէս ոստիկա-

նական գործակատար մը, հոշակելով առ հասարակ թէ Տուժան կեզծիք մըն էր, ցնորք մը, թակարդ մը: Անոնցմէ շատեր զայն բողոքողին սյոյքօք ընելու կարծիքէն էին, մինչդեռ ոմանք կընդունէին թէ՛ անհրաժեշտ է որ թոյլ արուէր ուս ժողովրդին ընտրել Տուժա մը, որ կարողանար գոհացում տալ ազգին համոզումներուն եւ բազմանքներուն:

Աստի է վեր, շնորհիւ ծայրայեղ կուսակցութեանց փոխադարձ բռնադատութեան, այնպէս թուեցաւ թէ՛ իրենց յուսահատ նախագուշակու մը պիտի արդարանայ իրողութիւններով եւս:

Բարեկարգելիք խոչնդոտները, Դժուար է, գրեթէ անհնար, երեւակայել այնքան ծանր գրութիւն մը, որուն մէջէն ընդհանուր ընտրութիւն մը ընելով, ժողովուրդը կարողանայ իր զգացումներուն ապարիջ տալ որքան Ռուսաստանինը ներկայ րոպէիս:

Հեռանալէս ի վեր, դրութիւնը ամէն տեսակէտով ալ զէպիլ յոյժն է փոխուած: Թղթակից մը կը գրէ ինծի:—

Ամբողջ գաւառներ տակաւին պատերազմական դրութեան մէջ կը գտնուին, ինչ որ կը նշանակէ թէ ատենք բնակիչները ենթակայ են բանտարկուելու, Սխալի քարտուելու, մտրակուելու, սպաննուելու, կախուելու եւ նոյն իսկ չարչրկուելու ժամանակաւոր բռնակալի մը ազատ կամքով, առանց ամենաթեթեւ դատական քայլի:

Իժարխտաբար ոչ միայն հնարաւորութիւն մըն է սա, այլ եւ իրականութիւն: Թերթերը, նոյնիսկ ներկայ գրաքննութեան ներքեւ, լինե մարդոց, կանանց եւ մանկանց վրայ կատարուած արիւնարբու արարքներուն զարհուրելի մանրամասնութիւններով, որ կը կատարուին ամենուրեք:

Բոլոր բանտերը մինչեւ բերանը, ինչպէս կըսեն, լեցուած են, ամէն օր հարիւրաւոր մարդիկ կը ձերբակալուին, առանց հարցաքննութեան, յաճախ իրենց միակ յանցանքը ըլլալով հասարակ պաշտօնեայի մը անհաճոյ երեւնալին կամ կառավարութեան ղէմ լարուած անգոյ գաւի մը մեղադրանքով:

Բայց եւ այնպէս, չը նայելով տիրող սոյն անոնի սարսափին, Տուժայի ընտրութիւնները վերջացան յաղթանակով մը ուս ազատական կուսակցութեան համար նոյնքան ջանքալից՝ որքան ձեռք բերուեցաւ Մեծն Բրիտանիոյ մէջ:

Մ. Յ.
(Շարունակելի)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՍՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԸ
(Շար. նախորդ քիւիսն եւ վերջ)

Ինչո՞ւ եւրոպ. կառավարութիւնները ու եւ ճիգ չեն ընել պատերազմի զէմ եղած ապահովութիւնը պահպանելու համար եւ ինչո՞ւ չեն միանար Մեզի կը պատասխանեն թէ, որովհետեւ մեր երկրագնդին զանազան քաղաքակիրթ պետութեանց մէջ կը տիրէ անբառնալի հակառակութիւն մը, Արդ՝ այս ենթադրուած

հակառակութիւնը ցնորքներու ցընորքն է, իրականութեան մէջ զոյւթիւն չունի ան, անիկա ծնունդատած է տղէտ ու աւանդամոլ պետական մարդոց ուղեղներուն մէջ, որոնց յանձնուած է դժբաղդարար, դեռ մինչեւ այսօր, ազգերու ճակատագիրը:

Ասոր մէկ ակնյայտին ապացոյցն է Ֆրանսայի ու Անգլիոյ միջեւ ճոյսացած համաձայնութիւնը: Այս երկու երկիրները ամբողջ եթէր տարի ամենավարձակատարութեամբ մարտն շեցան իրարու դէմ: Այդքան սրին թափելու եւ այդքան գերմարդկային ճիգեր բնիւս համար այդ երկու ազգերը անշուշտ հատուցած ըլլալու էին թէ անբառնալի շահերու հակառակութիւն մը կայ իրենց մէջ: Եթէ կայ երկու ազգեր որոնք այս տեսակ համոզում մը կրնան ունեցած ըլլալ, այն ալ տսոնք են: Արդ, գեղեզիկ առտու մը դիւանաբէտներն ու պետական մարդիկ այն հրաշալի գիւտը ըրին թէ այնպէս մէջ կէտ մը չի կայ որ Ֆրանսայի ու Անգլիոյ շահերը համեմատելի ըլլան:

Ֆրանսան այսօր 11 միլիոն քառքիւմ տարածութեամբ գաղթային կալուածներ ունի, անոյ գոհ եղաւ, որով Անգլիոյ զէմ իր հակառակութիւնը զարգեցաւ: Բայց, եթէ Ֆրանսացիք չի գոհանային 11 միլիոն քառքիւմ տարածութեամբ, եւ անպատճառ 12, 13 միլիոն ուղէին ունենալ, որով անպատճառ պնդէին թէ պէտք է գրաւեն Երկրագոյնը, Նուպիան, Նիկիէրը, Ալկաթան, Իրենց աստուծութիւնն ու թշնամութիւնը Անգլիոյ դէմ, երբէք չի պիտի վերնար: Արդ՝ 11 միլիոն քառքիւմ, հողով գոհանալ եւ 12, 13 միլիոն չը պահանջելը պարզապէս անձնական կարծիք մըն է: Այնպէս սերեմն ինչ որ անբառնալի հակառակութիւն կըսեն, մեր մտքին մէջ ըմբռնման ձեւն է, եւ ոչ թէ իրականութիւն: Եւ քանի որ մեր մտքին ջմբռնումները ակնդարձի մը մէջ կարելի է փոխել այդ հակառակութիւն ըսուածն ու աշխարհի ամենէն զիւրարառնալի բանն է:

Հապա Ալլաւ-Լորէնը, պիտի հարցընեն Այս ստակալի խնդիրն ալ ընդհանուր որչեքէն բացառութիւն չէ: Անիկա յոռալ կուգայ այն բանէն որ գերմանացիք իրենց շահերուն համապատասխան կը գտնեն իրենց իշխանութեան տակ պահել գաւառներ, որոնք իրենց կայսրութեան մասը չեն: Ըմբռն ժողովուրդ մը իր ծոցին մէջ պահելը շահաւոր նկատելը անձնական համոզում մըն է: Եւ եթէ գերմանացիք ասոր ճիշտ հակառակ համոզում ուզեն ունենայ, Արդաս-Լորէնի խնդիրը կը յուժուի անմիջապէս: Արդ պէտք է դիտել որ ևս տարեկան 1 յալի ան զոյն համոզումը, ու քաղաքակիրթ ժողովուրդ մը յալի տեսակէտ չի կրնար բխալի մէջ մտոյ, այդ տեսակ բան մը կը պատահի այն ատեն, երբ ազգին մտաւոր զարգացման մէջ կատարեալ անշարժութիւն մը յոռալ կայ: Բայց, այդ տեսակ պարագայ մը բնական օրէնքի հակառակ է: Բրնութեան մէջ ամէն ինչ կը կերպարանափոխուի, եւ ճիշտ ուղեղային նիւթը այնպիսի ամենէն անկայունն է: Արդ, երբ որ Գերմանացիք ճոյ մարտութիւնը նշմարեն, եւ կամ, ինչ որ նոյն է, երբ իրենց իրական օգուտը նշմարեն, իրենք իսկ պիտի ուզեն զիւմը: Սլլաւ-Լորէնի մէջ քուէտրութեամբ խնդրին յուժման, ինչ որ ամենէն բանականն է:

Ամփոփենք մեր բաժնեքը: Միջազգային ապահովութիւնը երբէք չտապալուի սպառազինութեամբ: Սպառազինութիւնը միմիայն անապահովութիւնը կաւելցնեն: Այս իսկ ի թէ անոնք կարենան ապահովութիւն պատճառել, այն տեսակ գիտով մը կը ըլլայ այդ, որ երբէք մատչելի չէ:

Բացարձակ ապահովութիւնը ամենէն ամեն կերպով պիտի ստացուի միջազգային համերաշխութեամբ: Ու ասիկա յ կատարելու պէտք կարելի է որովհետեւ կարծեցեալ հակառակութիւնները, որոնք ազգերը կը բաժնեն իրք թէ պարզապէս խրտուելակներ են որոնք գոյութիւն չունին իրականութեան մէջ: Անոնք յոռալ կու գան պարզապէս պետական մարդոց տղիտութեանը:

(Ք. Էսորթէն) Ի. ՆՕՎԻՔՕՎ

ԻԶՄԻՐԻ ԲԱՆՏԻՆ ՍԷՋ

Իզմիրէն հետեւեալ կարճ անգիւրթիւնը ստացած ենք:

Պիլ փութամ՝ ներկայիս իսկոյն ձեռք իմ, ցնիւր երէկի պատահածը բանտին մէջ: Մուշեղ անուն անձը անձնասպան ըլլալ կը փորձէ թիթեղի կտորով մը փղկն վիրաւորելով ինքզինքը: Առաջը կառնուի, եւ Մուշեղ տաճկաց հիւանդանոցը կը փոխադրուի: Շարունակութիւնը յայտնի չէ, մօտ օրերս պիտի տեղեկանամ: Այս վերջերս բանտին մէջ բաներ մը պատահած են, յուսով կը տեղեկանամ ու կիմաքնեմ:

ՕՐԸ ՕՐԻՆ

Մայրագոյն Արեւելքի մէջ Ռուսիոյ ջախջախուիլը, Ֆրանսայի մէջ կղերականութեան փճանալը, եւ Այժէ-Ղիրասի համաժողովը, երեւակ նիգակահցութեան հիմերը խախտեցին: Երեւակ նիգակահցութիւնը, այսօր իսկպէս, թէ ոչ պաշտօնապէս, յուժուած կը համարուի: Վէսուփի վերջին արկածային ժայթքումը, անոր աղիքներէն դուրս հոսած յովայի հեղեղը այրեց ու մոխրի վերածեց այն ամենը՝ որ կը մնար Պիգմաթեան երբեմնի այս անեղ յիւսութեանը: Երբեւակ նիգակահցութիւնը գատապարտուած է ձեռնելու, եւ կը մեռնի, որովհետեւ անոր գոյութեան սկզբնապատճառները այսօր կորսուած են իրենց էականութիւնը: Երբեմնի երկաթէ մարդը, պահպանելու համար նորածիլ գերմանական կայսրութիւնը Ֆրանսական վրիժառուութեան, կողապարեց ու յորինեց Գերմանո-Ռուսո-Աւստրո-Հունգարական դաշնակցութիւնը որ քիչ յետոյ կը յուժուէր, պայքանեան թերակողիին մէջ այս դաշնակից տղու թեանց ունեցած շահերու այլազանութեան հետեւ անօք: Ռուսիոյ մեկուսանալէն ետքը, Պիգմաթը Աւստրո-Հունգարիոյ հետ կընքեց 1879 ի նիգակահցութիւնը, որուն Յ տարի վերջը կը միանար եւ իտալիան:

Պատանի իտալիան կը նետուէր այս նիգակահցութեան գիրկը, իր դրա-

ցուէր, Ֆրանսայի մէջ տիրակալող քաղաքականութեան ստիպումի տակ: Այն ժամանակ Ֆրանսական հանրապետութիւնը կը գտնուէր կղերականներու ձեռքը, իսկ ասոնք ամեն օր քարոզ կը կարգային ազատել Հոսմը իտալական թագաւորութեան ձեռքէն զոր գերմանական ձեռնտուութեամբ ձեռք ձգած էր եւ վերադարձնել զայն Պապին:

Ֆրանսան Միջերկրականի վրայ իշխող միակ պետութիւնը կը համարուէր, յաւակնութիւնները մեծ էին, Թուրքիոյ վրայ ձեռք իրելով, կը սպստնար բոլոր Աֆրիկեան հիւսիսային երկիրները իւրացնել, ու այսպէս իտալական շահերը բոլորովին կը վերտանգուէին:

Վերջէն այս նիգակահցութիւնը քանի մը անգամ վերանորոգուեցաւ, իսկ այսօր դեռ ևս պայտանած մը չը լրացած նա կը կորսնցունէ իր սկզբնապատճառը, Ֆրանսայի մէջ այլ ևս տիրակալող տարրը կղերականութիւնը չէ: Թրիթոյի մասին, Ռուսիոյ ունեցած յաւակնութիւնը Ֆրանսան կըրողուի, Միջերկրականի մէջ անկախ մնացած շատ մը խնդիրներ այսօր ամեն ձեռք իրելու չը պատան լրենց յուժումը, Անգլիական կտրուվարութեան հետաքստապահանութեան շնորհիւ:

Իտալիոյ աշխարհագրական գիրքը կը պահանջէ որ նա ըլլայ ծովային ոյժ ներկայացնող տէրս թիւններէն մին: Իսկ այսօր Միջերկրականի մէջ գերակշիռ է անգլիական եւ Ֆրանսական ոյժը: Ինչ օգուտ կրնայ ակնկալել իտալիան իր դաշնակիցներէ եթէ երբ ևս ինչ մը ունենայ Անգլիոյ հետ—ծովային ոյժի տեսակէտով, գրեթէ ոչինչ:

Իտալական կառավարութեան այս հետաքստութիւնը եւ Անգլիական քաղաքականութիւնը չէր արդեօք որ իտալիոյ թագաւորին կողակից կընտրուէր ու կուտար Ձերնա-կորայի իշխանագուճը: Այսպէս յարկալծակի ծնունդ կանէ իտալական նոր քաղաքականութիւնը, սարկներու շրջանի մէջ դարձնուած: Իտալիան Աղբիականի վրայէն ձեռք կը կառուկարէ Պալքանեան թերակղզիին վերայ տիրակալող իշխանութեանց: Պալքանեան թերակղզիին իրեն հետ ամուր մը կապելու համար, իր նորարարող վաճառականութեան բազարներէն մին կը նշանակէ այս երկիրը: Այսօր իտալիան քաղաքականապէս եւ վաճառականապէս ամենամեծ մրցակիցն է Աւստրիոյ:

Իտալիան իր գիրքը լաւ մը ամրապնդելու համար պէտք կը զգայ գրաւել Սլաւոնիոյ ծովափունքը: Իսկ անոր այս ձգտումին բուն կերպով կը գիտաղբէ Աւստրիան, իր դաշնակիցը: Գերմանիան միշտ ոյժ կուտայ եւ պիտի տայ Աւստրիոյ այս գիտաղբուն մին որովհետեւ զանի իր յատուկապէս զինուորը կը նկատէ եւ մեծ յոյս ունի թէ կուգայ օր մը որ ավստրի գերմանախոս ազգաբնակիչութիւնը կը մտնէ իր դրօշակին տակ որպէս միացեալ պետութիւն մը, ինչպէս են մնացեալ գերմանական իշխանութիւնները: Եթէ երբէք գերմանական այս գարնանային երազը իրականանայ, այն ժամանակ, Վերջէն կայսեր Թուրքիոյ հանդէպ տաճած այսօրուան քաղաքականութիւնը, կուենեայ իր գերակշիռ առաւելութիւնները եւ իտալիան մի անգամ ընդ միշտ կը կորսնցունէ Ալպանիան

ձեռք ձգելու յոյսը :

Իտալիոյ պալատական քաղաքակա- նութեան ամէն տեսակէտով ոյժ կու- տայ Անգլիան: Եւրոպայի Մակեդոնա- կան հարցի մէջ, նա աւելի րոպայայ տօրէն ցուցադրեց իր դիտումները, եւրոպական ժամատար մէջ իր պարագլուխը կարգելով Իտալացի զինուորացեալ հրամանատար մը Տէ ձիօրճիւր: Ասկէ զատ Իտալիան ա- տանց արեւն թափելու կուզէ նուաճել: Միջերկրականը եզերող, թրտական երկիրը—Թրիբոնի, իսկ այս մասին, երեւոյթը այնպէս կը ցուցադրէ թէ՛ ֆրանսական եւ իտալական դահլիճի միջեւ արգէն համաձայնութեան մը յանգած են:

Սակայն Իտալիան, որպէս Գեր- մանիոյ զաշնակիցը, այսօր անկարող է դիւանագիտօրէն ձեռք ձգել այս երկիրը, որովհետեւ Վիլհելմի Թո- րթոյ հանդէպ տոճած ամենոյնիւր յարեկամական զգացումները, կրնան խնդիրը շատ բարդ եւ անլուծելի վիճակի մը վերածել:

Գերմանական կառավարութիւնը, Սուլթանի երկիրը չառն աղբիւր մը կը նկատէ միմիայն իրեն սեփական: Միւս կողմէն Իտալիան չափեր ձեռք կանգնէ Աւստրո-Հունգարական ոտնձգութեանց դէմ մաքսոտելու եւ թոյլ չտալու համար, որ գրոհ տայ զէպիլոսի-Բազար եւ Ալպանիա: Ի- տալիան այսօր ամէն առաւելութիւն- ներ ունի խափանելու համար Աւստ- րիական ու է շարժում Աւրոպական Թորթոյ արեւմտեան մասին մէջ:

Ինչպէս ներքին, Չէրնա-կորայի վեհապետը, Իտալիոյ թագաւորին ա- ներն է: Չէրնակորացիք կը սիրեն ի- րենց ազգիկը, իրենց փեսան, որքան Իտալիան արդէն ունի յենակէտ մը Ալպանիոյ եզերքին վրայ, նա հիմակ- ունէ հոն կրնայ տեսնել, զո՛ւչէ կը տեսնէ իսկ, ռազմական պատրաստու- թիւններ եւ պատերազմի մը ժամս- նակ Չէրնակորայի սարերէն, ոմբա- կոծել Տալմաջիայի մէջ գտնուած Աւստրիական միակ ծովային մեծ նա-ւահանգիստը: Անթիվարիին մէջ նո- րահաստատ ունի հետագրի կայանով, Իտալիան եւ Չէրնակորան իրարու

հետ զօղուելով մարմին մը կը կազ- մեն:

Ամէն պատահականութեանց առջեւ Իտալիան կազմ ու պատրաստ է այ- սօր, ամէն գնով նա կուզէ ու կը ճգնի իրեն սեփականացնել Աղբիւ- կան ծովը: այսպէս խորտակել Աւստ- րիական ծովային ոյժը, գերմանական երազները, ծաղկիլ, բարգաւաճիլ ու զօրանալ:

2.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՆՍՏՈՒԱՐՈՒ

ԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ՄԷ՞՞

Ա.

(Ճար. Անիւ. Երեւն)

Միւս կողմէն ծնողները զաւակ- ներնուն ձեռքէն բռնած մէկ դպրո- ցէն միւսը կը փոխադրեն զանոնք, միշտ յաւազոյնին յոյսով. սակայն փորձով կը համոզուին որ ապարդիւն կը մնան իրենց ջանքերը: Ոմանք վարժապետները անոնք են կը պո- տան, ուրիշները վարժուհիները կը դատապարտեն, կը նային որ իմաս- տակիւն մէկը ըվարժուհի չունինք» կը պոռչտայ, ուրիշ մը՝ «վար- ժապետ չունինք» կը կանչէ: Սա- կայն երբէք խնդրոյն հիմը քննելու, այս շարունակական երեւոյթին առ- ջեւն անտելու լուրջ ջանքեր չեն ըլ- լար: Երբէ՞ք, երբէ՞ք չենք խորհի- թէ ո՞վ է բուն չարիքին պատասխա- նատուն եւ ուրիշ է որ կը թղթի այս վտանգաւոր վիճակը: Արդեօք որքան պիտի կարծէին ու ամչնային առ- տուրէն միմիայն իրիկուն վարժապետ ու վարժուհի բամբասող ծնողները, եթէ ինքնամիտմամբ մտայնակի մը մէջ քիչ մը խորհէին ու գիտակից ըլ- լային թէ բուն իսկ չարիքին պատ- ճառը ու պատասխանատուն իրենք՝ այսինքն ծնողներն են, եւ քիչ մը համոզուին թէ իրենց զաւակները ժառանգականութեան անխուսափելի օրէնքով կամ ընտանեկան միջավայ- րին յոռի ազդեցութենէն է որ, մեծ մասամբ եղած են այնպէս, ինչ որ են այսօր: Ո՞վ կրտէ թէ միակ վար-

ժապետ կամ վարժուհի չունենանու համար է որ դպրոցները միշտ կը կա- ղան մանաւանդ կրթական տեսակէտով, իսկ եթէ բարեկամեցողութիւնը ու- նենանք անաչառ ակնարկ մը պտըտ- ցնելու չորջերմիս, եթէ խլորդի պէս յայտնիս զոցած՝ արեւուն լոյսը ուրանալ չուզենք, պիտի տեսնենք որ պոլլկար նախակրթարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներու հաւա- սար հմտութեամբ ու զարգացումով թէ՛ վարժուհիներ ունինք եւ թէ վարժապետներ:

Էական կէտը այն է որ հոգաբար- ձութիւնը տարեշրջանին առթիւ ու- սուցիչ ընտրելու փափուկ գործին զիտակից ըլլայ. էականը այն է որ հոգաբարձութիւնը անձնական հա- յիւնեթէ, կիրքերէ ու կուսակցական թելադրանքէ զերծ ըլլայ ու գործը չը յանձնէ անկարողներու ձեռքը: Ետտ ճիշտ կարծիք մը յայտնած պիտի ըլլայինք եթէ ըսէինք թէ մենք ոչ թէ ուսուցիչներ չունինք հապա մեր ունեցածին յարգը չենք գի տեր, եւ չը գիտնալնու համար է որ այսօր բաւական թուով ուսուցիչներ, որոնք իրենց անվիճելի կարողու- թիւններով եւ նկարագրով պատիւ կը լերէին կրթական գործին, հե- ռացած են սապարէզէն սնամէջ ըսի րսաւներէ զգուած, իրենց չուրջը յար ուած գձուած լնթիկի ցանցերէն զառնացած եւ մուրացկան ծերու- թեան մը զժնդակ հետապակերէն սարսափած:

Անկողմակալութեան ոգին զէմ չը գործելու համար յիշեմ նաեւ այն կարգ մը շոշորք ու տխմար թիբերը, որոնք կանխ ուսուցչական սապա- րէզին մէջ, ինչպէս որոմը արտերուն մէջ, այո՛, մենք այսօր կը տեսնենք զիտակից ու հմուտ ուսուցիչներու զարքերուն մէջ կարգ մը ինքնակոչ խաբեքաներ, կրթական գործին բան չը հասկցող շարլաթան ձեռնածուներ, ինքնահաւան, ամբարտաւան տգէտ- ներ, ձեւելու կամ կարելու կերպաս չգտնող դերձակուհիներ, քաղաքա- վարական տարրական ծանօթութեանց մասին լաքէյ է մը աւելի տգէտ անկիրթներ, գձուած շահերէ առաջ- նորդուող կուսակցամոլներ, եւն:

Կարելի չէ ուրանալ թէ այս սպի- կարներու ցաւազին շարքն ալ կուեն- նայ իր քանդիչ ու աւերիչ ազդեցու- թիւնը կրթական գործին մէջ: Սա- կայն ո՞ր գործին մէջ է որ գոյու- թիւն չունի այս ցաւալի երեւոյթը, միթէ չկա՞ն սպիկար փաստաբաններ, բժիշկներ, լրագրողներ վաճառա- կաններ, զրագէտներ եւն: միթէ այս մարդոց սպիկարութիւնը պատ- ճա՞մ մըն է որ մենք կասկածի տակ զնեմք անխղճօրէն առ հասարակ այդ սապարէզներուն հետեւող բոլոր մար- դոց կարողութիւնը եւ զանոնք բո- յորն ալ իբր սպիկարներ ցոյց տանք իրարու:

(Շարունակելի)

Մ. ԱՆԴՐԷԱՍՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Ընդհ. Վաճառական-Գործակատարներ

Կընդունուին ամէն կարգի յանձ- նարարութիւններ Անգլիական ու է տեսակի ապրանց համար, նմանա- պէս կը տրուին պատուէրներ: Աւելի մանրամասնութեանց համար զիմել մեր մասնաւոր գործատեղին:

8-9 New Street Bishopsgate, London E. C.

Ա Ռ Ա Ն Չ Ա Ր

ՎԵՏԻ ԾԻԾԱՂԸ

(ժողովածու երկերի)

— 2 —

Ժամանակակից թրքահայ կեանքէ վէպիկներ, պատմուած գողտրիկ ու հետաքրքրաշարժ լեզուով:

Դիմել ՄՈՒԻՐՃԻ Խմբագրութեան Թիֆլիս:

Դին 1 րուպլի:

ՍՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

Ընկերոջս Յ. ԱՂԱՍԷՐԻՆ

Քանի մը ժամ ետքը միայն իմա- ցայ պատմութեան շարունակու- թիւնը, ինքն Առաքելը սաստիկ ձեռ- կերած էր հօճայէն և անոր աղաղակին վրայ փողոցէն օգնութեան հասնող թիւրքերէն, ու արիւնլուայ վիճակի մէջ ստիկանատուն տարուած էր: Այս տխուր յուրին տպաւորութեանը տակ բաւական մեծ խղճի խայթ զգա- ցի բարեկամս վտանգի բուպէն լքած ու հեռուցած ըլլալուս համար, բայց այդ խղճահարութիւնս երկար չտեսցի: Ի՞նչ պիտի ըլլար օգուտը. եթէ վերջին վայրկեանին զգացուածս ոտ- ջերուս վրայ յարթանակը տանէր և հոն մնացած ըլլայի, շատ շատ գետին պիտի փռէինք փուճ կենդանին ու լաւ մը ձեռնէինք, բայց վերջը, ա- տով խնդիրը աւելի պիտի մեծնար, թիւրք խուժանը ներս պիտի թափէր և եթէ անոր ձեռքէն ողջ պրծէինք յետոյ կառավարութեան ձեռքը իյ- նալով զնոյններու մէջ էջ նահատակ պիտի ըլլայինք: Իսկապէս նոր կը


հասկնայի թէ ի՞նչ ահուկի վտանգ էր որ անցուցած էի և իրիկունը, երբ զէպը մօրս պատմեցի, խեղճ պատուը ամբողջ գիշերը աչք չփա- կեց և առտուան սոսալին զանգակի ձայնին ժամ փութաց Ս. Թորոսին առջեւ ջուխտ մը մով վառելու: Գալորդ օրը կէսօրէն ետքը վա ճառանոցիս մէջ քանի մը յաճա- խորդներու հետ զբաղած էի, երբ խապտ ձայն մը յանկարծ ընդհանեց մեզ: — Թորոս օղլու կարապետը ո՞վ է: Մերուկ զապթիյէ մըն էր, որ ան- նկատելի կերպով ներս մտած եւ սր- րույքները շարած կանգնած էր սեն- եակին մէջտեղը: — Ես եմ, ի՞նչ կայ, ի՞նչ կուզէք — հարցուցի տաջնապալի շարժումով: — Դո՞ւն ես, ուրեմն քալէ հետս, քովսէր պէյը քեզ կուզէ: Մարտու մը սողաց գլխուս մաղե- րէն մինչեւ ոտքիս եղունգները եւ սիրտս մեքենական մուրճի պէս գար- նել սկսաւ: — Չի՞ս կուզէ ըսիք, չեմ կարծեր, չի կրնար ըլլալ... ի՞նչ պիտի ընէ զիս: — Ատ իր գիտնալիք բանն է, քեզի

չը վերաբերի—բաւ զապթիյէն վայ- րահակ, Կոստանիւնի պիտի վեր ցըն- ցելով եւ ցուցամատր բարձրացնելով: — Այո՛, այդպէս է, իրաւունք ու- նի՛ք բայց չե՛ք գործ չունիմ ոտտիկա- նութեան հետ... բան մը չեմ բրած... կաղաչեմ... սխալ եկած չըլլաք... — Հա՛, հա՛, հա՛ հա՛, ե՞ս սխալ դուռ զարնեմ—պատասխանեց ծե- րուկը յոյսորտ ծիծաղով մը ժոռատ լինողերը ցուցնելով—է՛հ վեհա չունի, ե՛լ երթանք եթէ սխալած ըլլամ, կանոնեմ նորէն տեղը կը բերեմ քեզ, բան մը չես կորսնցներ: Բայց լա՛ւ նայէ ինձի, երկէ չէ որ ես այս պաշ- տօնիս մէջ մտած եմ, արդէն 15 տա- րի է, քեզի պէս շատե՛րը տարած բերած եմ, Այս խանին անունն ի՞նչ է—Ահմէդ աղա խան է, այնպէս չէ՞: քու անունդ ա՛լ Թորոս օղլու կարա- պետ է այնպէս չէ՞: է՛հ շատ աղէկ քովսէր պէյն ալ ինձի բաւա: «Ահ մէտ աղա խանին մէջ հոյ վաճառա- կան Թորոս օղլու կարապետը կանոնս ինձի կը բերես, և ես ալ ահա եկած եմ, հիմա դուն ըսէ, սխալ եկած եմ թէ ճիշդ—ու կրկին շարունակեց իր սրտագին ծիծաղը—հա՛, հա՛, հա՛ հա՛... — Չէ՛, ինչպէս կը տեսնեմ չէք

սխալած, ներեցէք, բայց կը տեսնէք որ հիմա քիչ մը գործ ունիմ, քովս- սէր պէյնին ծառայական յարգանքներս մատուցէք, վերջացնելուս պէս կու- գամ:

— Չէ՛, տե՛ս, ատ չեմ կրնար ընել, մեզմէ վեր օրէնքը կայ, օրէնքի հա- կառակ չեմ կրնար գործել, քեզ հետս չառած այս դունն դուրս չեմ ելլեր: Վնաս չունի, դուն գործը վերջացուր դեռ ժամանակ կայ ես ալ քիչ մը չունչ առնեմ, սիկարա մը, սուրճ մը խմեմ, մէկ շունչով սէրայէն մինչեւ հոս եկայ, քիչ տեղ չէ, ան ալ այս տաքին, երիտասարդ ժամանակս յոգ- նութիւն, ցուրտ, տաք ի՞նչ է չէի գիտեր, օրինակի համար Մօսկօֆի պատերազմին մինչեւ մէջքս ձեռնի մէջ օր ու գիշեր կը քալէի, ամեն- ին հոգս չէր, բայց հիմա ա՛լ երի- տասարդ չեմ:

(Շարունակելի)



«ԱՅԿԱԿԱՆ» ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹՅՆԵՆ ՇՍԱՆԻ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԹԻՒՆԵՐԸ

Թ Ի Ի

- 7 — Դաշոյն մը ՊՈՒՔՐԷՇ
- 3 — Վեցհարուած մը «
- 4 — Հնչ Գործիչներ «
- 14 — Կայիէ թղթապանակ մը ԲԵՂԵԱ
- 193 — Գրպանի ժամացոյց մը արծաթեայ ՎԱՌՆԱ
- 157 — Ժամացոյցի շրթայ մը «
- 124 — Պատիւնիք ժամացոյց մը «
- 102 — Երգարան Թումայեանի «
- 77 — Թխապարտը 2 հատոր «
- 88 — 50 հատ պիտադրոյժ «

Շահող թիւերը կրնան ընթերցարանէն ստանալ գոյքերը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պօլսէն կիմացնեն թէ՛ Սուլթանի եղբայրը Բէշատ էֆէնտին, օրհասական վիճակի մէջ է :

Անոր փոխան դահաժառանգ պիտի նշանակուի Եուսուֆ Իզզետիւնը, եթէ երբէք ժառանգական կարգը չը բարեփոխուի, ի նպաստ Սուլթանի կրտսեր օրդի Պուրհանէզտինի :

— Բրպերը և անոնց բարեկամները կը շարունակեն հայածել, Ահմէտ Բաթաբաշա բժշկապետը, ուսուցիչ բժշկական վարժարանին, Պօլսէն արտաքսուած է, որովհետեւ Ապաիւ Բէզագի հետ յարաբերութիւն ունի եղեր :

— Իզմէդ պէյ, հրամանատար Ֆէխիմ բաշայի հայրը, արքունեաց զազտնի ոստիկանութեան պետը, մեռած է : Նա Սուլթանի կաթնեղբայրն էր, և անոր մահը բաւական վշտացուցեր է այս վերջինը :

— Սամսունի մէջ բուռն յեղափոխութիւն կը տիրապետէ : Արիւնառչա կռիւներ տեղի կունենան փողոցներու մէջ : Բ. Դուռը կը պատրաստուի զինուոր ուղարկել :

— Հակառակ իր կրկնակ դիմումներուն, պարսից զեւպան Միրզա Բիգա խանը, տակաւին չէ կրցած Սուլթանին ներկայանալ :

Անգլիական և ռուսական զեւպանները պարսից զեւպանատան մէջ տեսակցելով, որոշեր են Բ. Դրան գիմել, և պահանջել որ այս վերջինս նշանակէ իր պատուիրակները որոնք պարսկական պատուիրակներու և Անգլո ռուսական ներկայացուցիչներու հետ միասին որոշեն թէ թորքիան և Պարսկաստանը ինչ իրաւունք ունին վիճելի հողաբաժնին վրայ : Սատէլին պէյը, որու պաշտօնն է արտաքին գործոց նախարարութեան մէջ զեւպանները ընդունիլ, ըսած է թէ Բ. Դուռը այս հարցով կը զբաղի :

Եթէ հօրցիս օրոշումը շատ ուշանայ, պարսից զեւպանութիւնը վճռած է իր յարաբերութիւն ներք խլել : Երեւոյթը այնպէս մը կը ցուցադրէ թէ՛ թշնամական գործառնութիւնները սկսելու են, յուսալի է պարսից զեւպանին Պօլսէն մեկնելը :

— Կառավարական շրջանակները կը հաւատեն թէ՛ թրքաեղիպտական հարցը վտանգալից գրութեան մը ծնունդ կուտայ : Անգլիական կառավարութիւնը շատ խիստ կերպով կը պահանջէ, թուրք զինուորներուն Երկրպետական երկրէ հեռանալը : Մովակալութիւնը ծովային ցոյց մը կը պատրաստէ թրքական ջրերու մէջ : Գանի մը լրագրիչներ կը յայտարարեն թէ՛ Մալթայի նաւատորմի զարգէն հրաման ստացած է պատրաստութիւն տեսնել ճամբայ ելնելու համար : Իսկ մամուլին մէկ մասը թուրքիոյ յարաբերութեանց մէջ զերմանական մտ կը նշմարէ :

— Սահմանազրկէն հասած վերջին լրագրիչները կիմացնեն գնդապետ Եանգուր մեռած չէ այլ վիրաւորուած, կը կարծուի թէ նա քիչ օրէն Սօֆիա կը հասնի գարմանուելու համար :

— Ամերիկայի Միացեալ Նահանգներու Պոլսոյ գործակատարութիւնը, Բ. Դրան ծանուցագիր մը տուած է, որով կը պահանջէ Փօքր Ասիոյ մէջ, Ամերիկեան կառավարութեան հովանաւորութեան տակ գտնուող հայկական դպրոցներու մասին Բ. Դրան տուած խոստման գործադրումը :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կառավարական խորհուրդը որոշեց, ճարտական պատերազմի մէջ մեռած զինուորներու արիւններուն ամէն տարի 1,100 000 ռուպլի հանգստեան թոշակ յատկացնել :

— Ռուս կառավարութիւնը հետըզհետէ իր թեւերը վար կառնէ, նա նկատի ունենալով ընտրութիւններու արդիւնքը, նոր ուղղութեան հետամուտ է, Բեթերսպուրկէն տրուած հրամանի մը համաձայն, Գիէլի մէջ ձերբակալուած քաղաքական յոնցաւորներէն 43 հոգի սպառնալից կամ են : Քիչ օրէն բանտարկուածներէն 80 հոգի եւս ազատ արձակուելու է : Այսօր տեղի պիտի ունենան Գիէլի նահանգի ընտրութիւնները :

— Պէրլինէր Լոզալ Անցայկէր՝ լրագրիչ Բեթերսպուրկէն կը հեռագրեն :

Հանրաժանութեան Մարկոլին անուն գատախազը Պէրլինէն բաքէգ մը ստացած է, զրկուած ապրիլ 12ին, որուն մէջ կայ եղեր նամակ մը և

նամակներու համար պայուսակ մը : նամակը անստորագիր է, կանայցի ձեռքով գրուած և հետեւեալ պարունակութեամբ : «Պայուսակին մէջ 1300 ռուպլի կայ, թղթեր և բանալի մը, թիւ 114 Գրէտի Լիօնէի, ինչպէս նաև անդորրագիր մը, այս ամէնը իջօրկի Կարոնի կը պատկանի : Պատախազ Մարկոլինը ամէն ինչ գտած է պայուսակին մէջ բացի յիշատակուած 1300 ռուպլի գումարը : Թղթերուն մէջ մարտ 29ին Կարոնէն փոխ առնուած 45 ռուպլի համար անդորրագիր մը կայ ստորագրուած : Իսկ այս թուականիս է ճիշտ որ Կարոնը կ'անյայտանայ : Մարտ 28 և 29ին Կարոնը Գիւրջինի փողոցին մէջ երկու կնոջ հետ այն ինչ գործ մը կունենայ, իսկ այն օրէն իվեր այս կիններն ալ անյայտացած են : Բեթերսպուրկի մէջ այնպէս կը կարծեն թէ Կարոնը դժբաղդութեան կամոճրի մը զոհը եղած է : «Պէրլինէր Լոզալ Անցայկէր՝ լրագրիչ իր կողմանէ կը յայտարարէ թէ՛ Պէրլինի ոստիկանութիւնը Կարոնի Պէրլին եկած ըլլալու մասին ո ո է հետք մը զըտած չէ, ասկէ կը հետեւցնէ թէ՛ այս նամակիս ուղարկումը խաղաղարութիւն մ'է :

— Պարսիկ յայտարարութեան համաձայն, Կոստատանդէնէն Սուլթանի գումարումէն անմիջապէս ետքը Վիթէն և Տուրնովոն տալու են իրենց հրաժարականը : Հաւանական է որ Վիթէի տեղ Մուրադիէվը նշանակուի, իսկ Տուրնովոն յաջորդէ Սարազովի նահանգի կառավարիչ Պուլիկիէնը :

— Երեք աշակերտներ 3—10 տարու, իրենց գասարանին վաւարանին ետեւ յեղափոխական յայտարարութիւններ կը գտնեն, որոնց բովանդակութիւնը հազիւ կառու էին հասկնալ, անմիջապէս կը վազեն ու կերթան ամենամօտիկ զօրանոցը, ուր կը սկսին այս յայտարարութիւնները զինուորներուն ցրուել : Տասնապետ մը զանոնք բռնելով կը յանձնէ ստիկանութեան : Այս դպրոցի վարժուհին ձերբակալուած է :

Ի Տ Ա Լ Ի Ա

Թագաւորը և թագուհին փառահեղ հանդէսով մը բացեր են Բիւլանսի աշխարհահանգէսը, երկրագործութեան նախարար Բունդանսն շատ ոգելից ճառ մը խօսած է, նա իր խօսքը ներկայներու շնորհիւ ծափահարութեան մէջ աւարտած է :

ԱՌՏԱՔԻՍ

Աւստրիական կառավարութեան նախարարապետ պարոն Կաուլը կայսեր ներկայացուցեր է դահլիճին հրաժարականը : Կայսրը

այ մասին մտածելու և որոշում մը տալու համար ժամանակամիջոց մը վերապահեր է : Կը հաւատեն թէ՛ կայսրը խօսք մը անգամ չէ բեր Կաուլին զայն համոզելու համար որ հրաժարականը ետ առնէ : Ասկէ կը հետեւցնեն թէ՛ Կաուլին յաջորդը արգէն նախատեսուած է :

— Հունգարիոյ մէջ ընտրութիւններ սկսեր են և շարաթ մը պիտի տեսնեն : Հակահունգարական շարժումները արգիւելու և զսպելու համար նախարարութիւնը շրջաբերական մը ուղղած է փոխ կառավարիչներուն, շատ անձնաւորութիւններ կան ձերբակալուած : Հիմակուան երեւոյթը այնպէս կը ցուցադրէ թէ՛ ընտրութիւնները արիւնալի պիտի ըլլան :

ՅԲՆՍԱ

Իտալական «Թրիպունա» լրագրի խմբագիրներէն միոյն, ներքին գործոց նախարար, պ. Գլէմանսոն յայտարարած է թէ՛ Յրանսայի ներկայ խռովութիւններու պատճառը, թագաւորականները, Պոնաբարթիցները և կերականներն են, որոնք ոյժ կուտան գործադուլի, ընտրութեանց վրայ ազդեցութիւն մը ներգործելու նպատակով : Խռովարարները պիտի դատուին, սակայն ոչ թէ բարձրագոյն այլ սովորական դատարաններու առջեւ :

— Ստրիկանութիւնը ձեռք անցուցած է վաւերաթղթեր, որոնցմէ ակնյայտնի կերեւի թէ՛ հակահանրապետական կուսակցութիւնները անիշխանականներու հետ ձեռք ձեռքի տուած կուզեն տապալել արգի կառավարական կերպը : Անիշխանական Մոնաղը ձերբակալուած է, կոմս Տիւրան Պօքրաթը նոյնպէս շատ կասկածելի է ոստիկանութեան համար, անոր քով գտնուած վաւերաթղթերու հետեւանօք, այս դաւադրութեան մասնակից է միանգամայն երեսփոխան Բուվրը Անիշխանականները Սէն զէտին վրայ գտնուող կամուրջ մը օդը հանգել փորձած են, կամուրջը անըջան կերպով փլասուած է, որովհետեւ այս փորձէն կէս ժամ վերջը Հավրէն հասնող շոգեկաւքը կրցած է անոր վրայէն անփլաս անցնիլ : Հակակառավարականները իրենց բոլոր ճիգը կը թափեն ընտրութեանց վրայ ազդելու նպատակով : Գլէմանսոն մեծ գործունէութիւն ու տոկունութիւն ցոյց կուտայ :